ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-6-5-Ա

ք. Երևան 10.07.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հուլիսի 10-ի նիստում քննարկեց 2024 թվականի հոկտեմբերի 18-ին հայտատուի ներկայացուցիչ Պայծառ Քոչարյանի կողմից ներկայացված՝ «Դիջիթէյայ» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Երևան, Դեղատան 4, բն. 2, AM) «snap» (No20231369) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 36-րդ դասի «ապահովագրություն դժբախտ պատահարներից. ապահովագրության վիճակագիրների ծառայություններ. անշարժ գույքի վարձույթ. անշարժ գույքի գործակալությունների ծառայություններ. միջնորդություն անշարժ գույքի հետ կապված գործառնություններում. ապահովագրման միջնորդություն. ապահովագրություն. անշարժ գույքի գնահատում. խնամակալական ծառայություններ. անշարժ գույքի կառավարում. բնակելի ֆոնդի կառավարում. ապահովագրություն հրդեհից. բնակարանների վարձույթ. ֆերմաների և գյուղատնտեսական ձեռնարկությունների վարձույթ. առողջության ապահովագրություն. ապահովագրություն դժբախտ պատահարներից ծովում. բորսայական միջնորդություն. կյանքի ապահովագրություն. բնակարանային բյուրոների ծառայություններ (անշարժ գույք). խորհրդատվություն ապահովագրության հարցերով. ապահովագրության հարցերով տեղեկատվության տրամադրում. գրասենյակների վարձույթ (անշարժ գույք). պահեստային (ապահովագրական) ֆոնդերի ծառայություններ. պայմանական ազատվածների համար երաշխավորման ծառայություններ. տարբեր մասնագետների համատեղ աշխատանքի համար գրասենյակների վարձույթ. անշարժ գույքի հետ կապված գործառնություններ. նվերների վկայականների տրամադրում» ծառայություններից և 38-րդ, 39-րդ, 41-րդ, 44-րդ 45-րդ դասերի ծառայություններից բացի, մնացած ծառայությունների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է

շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման որպես ապրանքային նշան, բացի վերը նշված դասերի ծառայություններից, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող «Snap» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://conversebank.am/blog/item/snap, https://www.fintech.am/arag-ev-akntartayin-vark-converse-mobile/, https://www.instagram.com/reel/CpChpkUoEdB/ ինտերնետային կայքերում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման որպես ապրանքային նշան, քանի որ այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող «Snap» ապրանքային նշանի նկատմամբ, որի վերաբերյալ տվյալները տեղադրված են https://conversebank.am/blog/item/snap, https://www.fintech.am/arag-ev-akntartayin-vark-converse-mobile/, https://www.instagram.com/reel/CpChpkUoEdB/ ինտերնետային կայքերում, և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը ներկա չէր նիստին, սակայն չէր առարկել առանց իր ներկայության բողոքը քննարկելու համար:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայտատուի ներկայացուցիչ Պայծառ Քոչարյանի կողմից ներկայացված «Դիջիթէյայ» ՍՊԸ ընկերության «snap» (No20231369) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ